«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների գեղագիտական զարգացման գործում «Էքսկուրսիա դեպի խաղալիքների արտադրական ֆաբրիկա», «Տիկնիկային թատրոն»: Դրանց դերը և նշանակությունը:

Հաստատություն՝ Երևանի հ 121 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Սուսաննա Սիրականյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3
Խաղի դերը երեխայի կյանքում……4
Խաղալիքների ազդեցությունը երեխայի զարգաման վրա……5
Տիկնիկային թատրոն……11
Եզրակացություն……14
Օգտագործված գրականության ցանկ.....15

Ներածություն

Մի հանրագիտարանում ասվում է. «Սովորաբար խաղալիքներ են անվանում այն առարկաները, որոնցով խաղում են։»

Խաղալիքներն ու խաղերը մեզ են հասել հեռավոր անցյալից և օգտագործվել են բազում քաղաքակրթություններում։

Դրանք լինում են և՛ պարզ, և՛ բարդ։ Խաղալիք կարող է դառնալ ինչպես երեխայի ձեռքին գտնվող սովորական փայտը, որով նա «ձի– ձի» է խաղում, այնպես էլ որևէ բարդ սարքավորում»։ Այսպիսով՝ խաղի մեջ օգտագործվող ցանկացած առարկա կարող է դառնալ խաղալիք։ Եվ քանի որ մարդն ի ծնե զանազանություն է սիրում, կարելի է ենթադրել, որ խաղալիքները գոյություն ունեն գրեթե նույնքան ժամանակ, որքան և մարդկությունը։

Ինչ խոսք, խաղալիքները շատ սիրված են գլխավորապես այն պատճառով, որ նրանցով հաճելի է խաղալ։ Այնուամենայնիվ, երեխայի զարգացման մեջ նրանց դերը բավականին մեծ է։ Ահա մի քանի օրինակ. երբ երեխան խաղալիք–սայլակ է հրում, զարգանում է նրա մկանային համակարգը, իսկ երբ պարան է խաղում՝ կոորդինացիան, երբ նա մի ոտքով հարվածում է գնդակին կամ հեծանիվ է վարում, սովորում է հավասարակշռություն պահպանել, իսկ երբ նկարում է կամ խորանարդներով որևէ բան է կառուցում, սովորում է ճշգրտորեն կառավարել իր շարժումները։

Խաղերն ու խաղալիքները երեխայի լիարժեք զարգացման հարցում առանցքային դեր ունեն։ Դրանք ոչ միայն երեխայի համար ժամանակ անցկացնելու և հաճույք ստանալու միջոցներ են , այլև կատարում են կրթական ու դաստիարակչական դեր։

Խաղը կրթության ամենաարդյունավետ միջոցներից է։ Հետաքրքիր խաղային գործունեության ընթացքում դաստիարակվում են մտավոր կարողությունները, բարոյական հատկությունները, գեղագիտական զգացումները։ Խաղն ու խաղալիքը անբաժան հասկացություններ են։ Խաղալիքը հատուկ ստեղծված իր է մանկական խաղերի համար։

Դիդակտիկ խաղալիքները նախագծված են այնպես, որ երեխան, խաղալով դրանց հետ, սովորի նոր գործողություններ, ձեռք բերի որոշակի հմտություններ։

Խաղի դերը երեխայի կյանքում

Խաղը երեխայի կյանքի բնականոն զարգացման գործընթաց է: Այն երեխային հնարավորություն է տալիս զննել, ստուգել, զարգացնել մտքեր և գաղափարներ, փորձել և սխալվելով սովորել: Երեխան իրեն շրջապատող աշխարհը ճանաչում, ընկալում է խաղի միջոցով: Երեխայի մանկությունն ուղեկցվում է խաղով: Յուրաքանչյուր խաղացող երեխա առաջին հերթին ջանում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում: Խաղը նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական փորձի ձեռքբերմանը: Խաղի ընթացքում բավարարվում են երեխայի ակտիվության, ինքնուրույնության հիմնական պանաջմունքնեռրը: Բնական ճանապարհով զարգանում է երեխայի հոգեկան գործընթացները:

Խաղը մի գործընթաց է, ուր չկա ճնշում և հարկադրանք:Երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղը նպաստում է յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունների և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Խաղի ժամանակ երեխան ուշադիր լսում է դաստիարակին: Անընդհատ կրկնվող բառերը չեն հոգնեցնում նրան: Որքան քիչ վերահսկեն խաղը, այնքնան ավելի հետաքրքիր կլինի երեխայի համար: Պետք է թույլ տալ, որ երեխան ինքը ղեկավարի խաղը: Դա զարգացնում է ինքնավստահություն և ինքնուրույնություն: Խաղի ընթացքում երեխան ինքը պիտի բացահայտի իր սխալը: Պետք է հարցնել, ինչու է այդպես ուղղում սխալը: Դա կօգնի նրա մտածողությոն զարգացմանը:

Խաղալիքների ազդեցությունը երեխայի զարգաման վրա

Խաղալիք - հատուկ նախատեսված մանկական խաղերի համար նախատեսված իր: Դրա օգտագործումը օգնում է ընդլայնել երեխաների մտահորիզոնը, խթանել հետաքրքրությունը դրանում արտացոլված իրականության առարկաների և երևույթների նկատմամբ և զարգացնել անկախությունը: Խաղալիքների հետ համատեղ խաղերում երեխաները ձևավորում են ընկերական հարաբերություններ, իրենց գործողությունները համակարգելու ունակություն:

Երեխայի համար նախատեսված խաղալիքը պետք է ընդօրինակի իրական առարկան՝ միաժամանակ կրկնելով նրա ձևը, գույնը և հիմնական հատկությունները: Այսինքն՝ նապաստակը չլինի կանաչ, իսկ գորտը՝ մանուշակագույն: Խաղալիքի ընտրության հարցում շատ կարևոր է հաշվի առնել երեխայի տարիքն ու հետաքրքրությունները:

Խաղալիք ամենափոքրիկների համար (մինչև մեկ տարեկան): Այս տարիքում երեխան աշխարհը ճանաչում է զգայունակության և շոշափման միջոցով: Լավ կլինի խաղալիքներն ունենան մեղմ հնչեղություն, վառ գույներ, լինեն փափուկ, որպեսզի երեխան կարողանա կծել, շոշափելու համար ունենան տարբեր մակերեսներ, չափսերով և ձևով լինեն փոքրիկ և հարմար բռնելու համար:

Մեկ տարեկան: Նախընտրելի են գունավոր պլաստմասսե բուրգերը, գունավոր խորանարդները և տարբեր չափսերի բաժակներ, որոնք դասավորվում են իրար մեջ: Նման խաղերով երեխան ոչ միայն կզարգացնի իր մտածողությունն ու ինտելեկտը, այլև հաճույք կստանա խաղային գործընթացից:

Երկու տարեկան: Նախընտրելի են մեծ գունավոր գնդակները, բուրգերը, փափուկ խաղալիքները, որոնք այս տարիքում երեխաներն այլևս չեն տանում բերանը և հաճույքով գրկում ու քնում են: Երկու տարեկան հասակում երեխաների մոտ ինքնուրույնության դրսևորումներ են նկատվում՝ կապված զարգացող ԵՍ-ի հետ: Պետք է այդ պահը որսալ և երեխաների մեջ «սեփական խաղի տարածք» և «սեփական խաղալիքների անկյուն» հասկացողությունը սերմանել: Դրա համար երեխան պետք է ունենա հստակ տարածք, որտեղ նա կխաղա, և մեծ արկղիկ, որում կպահի իր խաղալիքները խաղալուց հետո:

Երեք տարեկան: Տարիքին համապատասխան խաղալիքների տեսակներն ու չափսերն ավելի բազմազան են դառնում: Քանի որ այս տարիքում երեխան աստիճանաբար ընդգրկվում է իրական կյանքի իրավիճակների մեջ, նա հաճախ իր խաղի մեջ է ներառում տարբեր դրվագներ, որոնք կապված են ընտանիքում կատարվող իրադարձությունների հետ: Հստակ գույներով, ձայներով և ձևերով խաղալիքներին գալիս են փոխարինելու երևակայությունը զարգացնող կոնստրուկտորները, որոնցից կարելի է բազմաթիվ կերպարներ կերտել մեծահասակի օգնությամբ: Խրախուսվում է գնել մասնագիտական հավաքածուներ՝ խոհարարի, բժշկի, շինարարի, խոհանոցային, նկարչական պարագաներ: Երեխաներն արդեն պետք է սկսեն իրազեկվել իրական կյանքում գործունեություն ծավալող մարդկանց մասին:

Չորս-հինգ տարեկան: Այս տարիքում ակտիվ զարգանում են իմացական գործընթացները՝ մտածողություն, երևակայություն, հիշողություն և ուշադրություն: Ընտրեք դերային խաղերի համար կենդանիների կամ տիկնիկների հավաքածու, որտեղ երեխան կկարողանա խաղարկել ընտանեկան իրավիճակներ: Մեծ խաղալիքներն աստիճանաբար նրանց հետաքրքրությունների սահմաններից դուրս են մղվում: Առավել ցանկալի է դառնում ծնողի հետ միասին թղթից կամ մեկ այլ նյութից ձեռքի աշխատանքներ անելը:

Վեց տարեկան: Այս տարիքում երեխաներն առավել հակված են ինքնուրույն ստեղծել ինչ-որ իրեր: Դրա համար առավել նպատակահարմար է գնել փազլներ, կոնստրուկտորներ, կարելու, գործելու պարագաներ: Երեխան ինքն է իր գործունեության և հետաքրքրության սահմանները փոխում՝ ենթագիտակցաբար պատրաստվելով դպրոցին:

Դպրոցական: Այս փուլում երեխաները սկսում են խաղալ առանց խաղալիքների: Նրանց խաղերը կապված են լինում մարդ-մարդ փոխհարաբերություններին: Բակային խաղեր, ինտելեկտուալ հարց-խաղեր, և այլն:

Կարևորն այն չէ, որ երեխան ունենա շատ խաղալիքներ, կարևորն այն է, որ երեխան, ունենալով նույնիսկ մեկ, բայց ճիշտ խաղալիք, գրանցի զարգացում և մեկ քայլ առաջ գնա դրա շնորհիվ:
Որոշ խաղալիքների միջոցով երեխաները սովորում են գույները, երկրաչափական պատկերները, թվերը: Կան խաղալիքներ, որոնք օգնում են երեխայի այս կամ այն որակների զարգացմանը, իմացական ոլորտի ձևավորմանը: Կան խաղալիքներ, որոնք երեխայի մեջ ագրեսիա են առաջացնում: Օրինակ՝ ատրճանակ, դանակ և այլն: Մեկ այլ կողմից, որոշ խաղալիքներ օգնում են երեխային ազատվել ագրեսիայից, օրինակ՝ թմբուկներ, մուրճիկներ:

Կարևոր է խաղալիքների միջոցով զարգացնել երեխայի ստեղծագործական ունակությունները: Այստեղ խոչընդոտ կարող է լինել շատ խաղալիքների առկայությունը: Որպեսզի երեխայի երևակայությունը աշխատի, նրա տրամադրության տակ պետք է լինեն պարզ խաղալիքներ, որոնք կարող են բազմաֆունկցիոնալ լինել: Հոգեբանները խորհուրդ են տալիս ընտրել այն քսան խաղալիքները, որոնցով երեխան ավելի հաճախ ու հաճույքով է խաղում, իսկ մնացածը հեռացնել երեխայի աչքից: Այնուհետև կարելի է ժամանակ առ ժամանակ փոփոխել խաղալիքների կազմը: Ինչ վերաբերվում է կարծրացած տեսակետին, որ տղա երեխան չպետք է խաղա տիկնիկով կամ աղջիկը՝ ավտոմեքենայով, սխալ է: Երեխայի խաղալիքները կերպարներ են, որոնք հետագայում նա ընկալելու է իրական կյանքում: Իսկ տիկնիկը նրա համար իգական սեռի որևէ ներկայացուցիչ է իր փոքրիկ աշխարհում: Հոգեբանները նկատել են, որ երեխայի կողմից խաղալիքի ընտրությունը կամված է նրա ներքին

խառնվածքի հետ և մանկական տարիքում նրանց բնավորության անհատական գծերը անպայման ի հայտ կգան մեծ տարիքում:

Երեխայի բարոյական և զգացմունքային զարգացման մեջ տիկնիկն ունի մեծ նշանակություն: Ելնելով երեխայի կամքից և երևակայությունից տիկնիկն իրեն պահում է այնպես, ինչպես նպատակահարմար է նրա փոքրիկ տիրոջը: Տիկնիկը իդեալական ընկեր է որն ամեն ինչ հասկանում է, խելոք է , լսող, երբեք չի դժգոհում: Ապացուցված է, որ երեխաները սիրում և նախընտրում են փափուկ և նուրբ խաղալիքներ, որովհետև նման խաղալիքները առաջացնում են դրական զգացմունքներ: Հույն փիլիսոփա Արիստոտելն ասել է. <<Մանկությունից ի վեր մարդը բնազդաբար ընդօրինակում է ուրիշներին>>: Այո, իրենց խաղերում երեխաներն ընդօրինակում են մեր առօրյա գործերի մեծ մասը և սովորում անել դրանք:

Չորսից հինգ տարեկանում սկսվում է դերասանական խաղը: Կերպարներ խաղալը երեխաների սիրած զբաղմունքն է: Երեխաները սիրում են խաղալ կենդանիների կերպարներ, հեքիաթի հերոսներ դառնալ: Այս խաղում է, որ ակտիվորեն զարգանում է երեխայի երևակայությունը, կարողությունը, ինքնությունը պարզելու ունակությունը: Հինգ տարեկան երեխան դուրս է գալիս իր դիրքորոշումից, երբ բացի <<ես>>-ից կենտրոնանում է նաև շրջապատող մարդկանց վրա: Դաստիարակը պետք է սովորեցնի կերպարի մեջ մտնել, ցույց տալ տվյալ կերպարի ձայնային կողմը, շարժուձևը պատմել այդ կերպարի մասին:

Երեխաները համպատրաստից կարող են ներկայացումներ խաղալ, անհրաժեշտ բոլոր բեմական միջոցները կարող են հենց տեղում պատրաստել՝ ներկայացնել և ներկայանալ կենդանի ձևով:

Խաղ-ներկայացումը հնարավորություն է տալիս երեխային ներկայանալու, արտահայտվելու, դառնալու ավելի անմիջական և շփվող: ԴԵրային խաղերից ծնվում են թատերական ներկայացումներ:

Տիկնիկային թատրոն

Տիկնիկային թատրոնը թատերական ներկայացումների տեսակ է, որտեղ գործող անձինք տիկնիկներն են, իսկ խաղացնում են դերասան տիկնիկավարները։

Տիկնիկները խաղացնում են հիմնականում չորս եղանակով՝ մատներով, թելերով, ձողերով և ստվերային պատկերներով։

Ամաչկոտ երեխայի համար տիկինիկի հետ խաղը շատ կարևոր է: Երեխան սկսում է խաղալ, պատկերացնում է տարբեր իրավիճակներ, կերակրում է, պատմում տարբեր հեքիաթներ, տիկնիկից նա չի ամաչում, ընկճվում, ավելի ազատ է: Տիկնիկի հետ խաղալիս երեխան ավելի համարձակ է դառնում, ազատվում բարդույթներից:Կարելի է երեխայի հետ պատրաստել տիկնիկ, խոսեցնել նրան, հարցնել կարծիքը: Այս գործընթացը զարգացնում է երեխայի գեղագիտական ճաշակը: Վերջում տիկնիկներով կարելի է խաղալ դերային խաղ՝ խաղի մեջ ներգրավելով մյուս երեխաներին: Այս գործընթացն էլ կձևավորի խմբով աշխատելու ունակություն, ազատ, անկաշկանդ շփվելու կարողություն հասակակիցների և մեծերի հետ:

«Տիկնիկավարը հենց ձեռքը դրեց տիկնիկի մեջ ու բռնեց նրա թելերը, տիկնիկն արդեն կենդանի արարած է,- ասում է Երվանդ Մանարյանը,- թողեց թելերը՝ իր է, առարկա: Մեծ հրաշք է, երբ երեխան խաղում կամ շփվում է տիկնիկի հետ: Նա հարցեր է առաջադրում, իբրև թե այդ հարցերը տիկնիկից է լսում և ինքն էլ սկսում է մտածելով պատասխանել իր իսկ տված հարցին: Այնպես որ՝ այն ծնողները, ովքեր իրենց երեխաներին հաճախ են տիկնիկային թատրոն տանում, նախ ազատվում են երեխաների շատ բարդ հարցերին պատասխաններ տալուց: Միաժամանակ օգնում են նրան հետագա կյանքում ինքնուրույն հաղթահարել խոչընդոտները: Տիկնիկայինում դաստիարակված երեխան փառավոր պատկերացումներ ունի: Նա հավատ ունի և գիտի, որ իր կողքին կան նաև իր նման մտածող այլ երեխաներ: Երեխաների հետ իհարկե ավելի դժվար է աշխատելը: Երբ պահի տակ ուզում ես որևէ նոր բան ավելացնել ասածիդ կամ արածիդ մեջ, դե ստեղծագործ մարդ ես, մեծերի համար հեշտ է այն ընդունելը, կամ

էլ՝ սովորականի նման կանցնի-կգնա: Բայց երեխաներին տվածդ ամեն մի խոսքի և ակնարկի համար դու ասես Աստծո առաջ ես պատասխանատու: Շատ դժվար է»:

Թատրոնն ունի կախարդական ազդեցություն, այն կարողանում է երջանկացնել մարդկանց: Թատրոնն երեխաների հոգիները կարողանում է լցնել դրական հույզերով, դաստիարակել բարի ոգով.չէ որ թատրոններում՝ ներկայացումների ժամանակ միշտ հաղթում է բարին: Թատրոնով հատկապես տպավորվում են նախադպրոցական տարիքի երեխաները: Նրանք ամբողջովին տրվում են զգացմունքներին՝ փորձելով նմանվել բարի հերոսին կամ հերոսուհուն: Թատրոնն օգնում է նաև զարգացնել երեխաների բառապաշարը: Երեխան տեսնելով բեմում տիրող բազմաշերտ մթնոլորտը, Փորձում է վերարտադրել ու հնարավորինս պատկերավոր ներկայցնել իր մտերիմներին:

Տիկնիկային թատրոնը նպաստում, պայմաններ է ստեղծում անհատի ամբողջական դաստիարակության համար: Այն ինքնաարտահայտման և միաժամանակ հոգեբանական լարվածության վերացման միջոց է: Տիկինիկային թատրոնը շատ երկրներում կիրառվում է որպես հոգեթերապիայի մեթոդ:

Եզրակացություն

Եվ այսպես ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգումների՝

Նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում կարևոր տեղ են գրավում խաղալիքները, խաղերը, տիկնիկային թատրոնը։

Խաղերը խաղալիքները, տիկնիկային թատրոնը երեխայի կյանքի զարգացման գործոնն է։

Մանկական խաղը մշակվել է հոգեբանության կողմից և համարվում է ամենակարևոր գործընթացը երեխայի կյանքում, հատկապես նախադպրոցականի կյանքում։

Խաղը, դերախաղը, բեմականացումը և վերջապես թատրոնը երեխայի զարգացման հրաշալի միջոց են։

Երեխայի խաղը յուրօրինակ խոսք է, որը նա փորձում է հասցնել մեծին, և դա լսել կարողանալ է պետք։

«Երեխաները պետք է ապրեն գեղեցկության, խաղերի, հեքիաթների, երաժշտության, նկարների, ֆանտազիայի, ստեղծագործության աշխարհում։»

Վ.Ս.Սուխոմլինսկի

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ» Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համարՍ. Տ. Վարդումյան Նոյյան Տապան 2005թ
2. Акулова О. Театрализованные игры // Дошкольное воспитание, 2005
3. Антипина Е.А. Театрализованная деятельность в детском саду.-М., 2003
4. Артемова Л. В. Театрализованные игры дошкольников.— М., 2010
5. Буренина А.И. Театр всевозможного. Санкт-Петербург,. 2002